Մյուս կողմից, հայտնի է (եւ սիրիական իշխանությունները դա չեն բացրել), որ դեռեւ 1970-ական թթ. Դամասկոսը սկսել է իրականացնել ֆիմիական գենֆի արտադրության ստեղծմանն ուղղված խուռա ծրագիր, որի արդյունքում ստեղծվել էր որոշ անհրաժեշտ մարտական թունավորող նյութերի արտադրական բազա։ Ինչուս հայտարարում են սիրիական բաղադրական եւ ռազմական դեկավարության ներկայացուցիչները, այդ «ռազմական թունավոր նյութեր» չեն կարող դիմարկվել որմես զանգվածային ոչնչացման գենֆ, բանի որ, ըստ սիրիական ռազմական հայեցակարգի, այդ գենֆը կարող է կիրառվել միայն այն դեմքում, եթե հսրայելը, որն իր զինանոցում ունի տարբեր տիղի զանգվածային ոչնչացման գենֆեր, այդ թվում՝ միջուկային, լայնածավալ ռազմական գործողություններ սկսի Սիրիայի ունմ։ Սիրիական իշխանություններն այս գենֆը դիմարկում են որմես «հսրայելի դեմ զսուման միջոց»։ Հարկ է նշել, որ համաձայն ռազմական Վերլուծաբանների՝ Սիրիան Արեւելքում ֆիմիական գենֆի ամենախուռա զինանոցը դատկանում է Սիրիային, որը, բացի այդ, ունի նաև այն հսրայելի տարածք հասցնելու համար անհրաժեշտ հրթիռներ։ Այդ հրթիռների զգալի մասը գնվել է դեռեւ Խորհրդային Միությունից, որի փլուզումից հետո այս հարցերում սիրիացիների հիմնական գործընկերը

դարձավ Յյուսիսային Կորեան: Միջազգային մամուլում հրապարակվել են նաեւ լուրեր այն մասին, թե սիրիացիները համագործակցել են սեփական հրթիռների արտադրություն ստեղծելու գործում Ռուսաստանի, Չինաստանի, Իրանի հետ, սակայն մինչ այժմ այդ ջաները հաջողորդություն չեն ունեցել: Ամենայն հավանականությամբ, ննան արտադրության կարիքն այնքան մեծ չէ, քանի որ Սիրիան տարածաշրջանում ունի միայն մեկ «բաց» կոնֆլիկտ՝ իւրայելի հետ, եւ արդեն իսկ ունեցած հրթիռները սիրիացիներին թույլ են տալիս սրանալ իւրայելցիներին հավասարագոր դատասխան հարվածով:

Միացյալ Նահանգները անցած երկու տարիների ընթացքում մի քանի անգամ հայտնել է Մոսկվայի եւ Դամասկոսի միջեւ միջուկային ծրագրերի եւ հրթիռային տեխնոլոգիաների ոլորտում ծավալվող համագործակցության վերաբերյալ իրենց անհանգստության մասին: Դայսնի է, որ Սիրիան ձեռք է բերել 25 մեգավատ հզորությամբ միջուկային ռեակտոր, որն, իր խոսքերով, օգտագործվում է գիտական նորագույն համար: Նման սարքավորումը, համաձայն մասնագետների, կարող է օգտագործվել նաեւ ոլուտոնիում ստանալու համար:

Սակայն ԱԵՄԳ-ի մասնագետները, որոնք իրականացնում են իրենց ստուգումները սիրիական օբյեկտներում, գտնում են, որ ննան աշխատանքներ Սիրիայում չեն տարվում եւ բացատրում են դա նրանով, որ սիրիացիները չունեն անհրաժեշտ տանակության եւ ճակարտակի մասնագետներ, ինչը նաեւ երկրի սևստական ներուժը թույլ չի տալիս նման ծրագրեր իրականացնել: Մյուս կողմից, ռազմավարական վերլուծաբանները գտնում են, որ Սիրիան իւրայելի դեմ երթի չի կիրառի միջուկային գեներ, քանի որ ինքը եւս կտուժի իր հասցրած հարվածից: Նույնը, ի դեմ, վերաբերում է նաեւ իւրայելին:

Դեկտեմբերի 12-ին սուրագրած օրենքին հետեւեցին ԱՄՆ նախագահ Ջ.Բուտի մեկնաբանությունները, որոնց հիմնական նորագույն էր հյուսարարել, որ այդ օրենքի հաստատումը չի նշանակում, թե նա ընկալում է «վերջինին ձեւակերպումները որպես Սիրիայալ Նահանգների արտաքին բաղադրականության

հիմնադրույթներ»: Նա նույն է, որ ինքը, լինելով գործադիր իշխանության ղեկավար եւ իիմնվելով ամերիկյան սահմանադրության վրա, դիտարկում է այդ օրենքի տեսում դարունակվող ձեւակերպումները որպես խորհրդավական նույնակություն ունեցող գաղափարներ, որոնք կարող են օգտագործվել այնքանով, որպանով «կիանադարասախաննեն այն դահանջներին, որոնք ներկայացվում են ԱՄՆ արտաքին բայցարկանության նկատմամբ»:

Փաստում, նախագահ Բուշը այս բացատրությունը տալով՝ նույն է, որ Սիրիայի նկատմամբ դաժանական միջոցներ կիրառվեն միայն այն դեմքում, եթե Դամասկոսը չհամաձայնվի այն դահանջներին, որոնք Սիրայալ Նախանջները ներկայացնում է նրան: Անհրաժեշտ է նույն, որ Սիրիայի նկատմամբ «ազդեցության այլ միջոցներ» կիրառելը շատ ավելի հետև կլինի, քանի որ ամերիկյան բանակը արդեն իսկ տեղակայված է տարածաշրջանում. այսինքն՝ Սիրիայի վրա ռազմական գործողություններ տարածելը Վաշինգտոնից մեծ լրացուցիչ ծախսեր եւ ջանքեր չի դահանջի, իսկ դատերազմը այս փոքրիկ երկրի դեմ, որը նաև նավք եւ գազ արտահանող է, խոստանում է լինել կարճատել եւ դյուրին: Այլ հարց է, որ Սիրայալ Նախանջների նման գործողությունները կիանդիմեն շատ ավելի լուրջ դիմադրության համաշխարհային հանրության կողմից, քանի որ Սիրիայի բասահստական վարչակարգը բոլորովին նման չէ Սադամ Ռուսեյնի վարչակարգին: Վաշինգտոնի նման գործողությունները ավելի անհանդուժող եւ իր արտահայտությունների մեջ ծայրահեղական կդարձնեն նոյնիսկ այն արարական եւ իսլամական ուժերը, որոնք մինչեւ այժմ գուստ կամ չեզոք կեցվածք ունեին:

Ի՞նչ է դահանջում ԱՄՆ-ը Սիրիայից: Առաջին հերթին, սիրիացիները դեմք է դադարեցնեն իրենց օժանդակությունը դադեստինյան այն կազմակերպություններին, որոնք դիմադրում են «Ճանադարհային բարեկամ» ընկերություններին: Բացի այդ, սիրիացիները իրենք դեմք է նաև իրայելի հետ բանակցությունների սեղանի ընկերություններին, որոնց աշխատանքային

Տարբերակները ստեղծվել եին 1990-ականներին, Բարագիական բանակցությունների ընթացքում: Նրանի դեմք է աղահովեն իրավյան սահմանների աղահովությունը սիրիական կողմից եւ հանձնեն Սիրիա փախած իրավյան դեկավարության անդամներին: Սիրիան դեմք է դուրս հանի Լիբանանից իր բոլոր սոնրաբաժանումները եւ դադարեցնի իր միջամտությունը այս երկրի ներին գործերին: Կան բազմաթիվ այլ մանր դահանջներ, սակայն հիմնականները սրան են: Կատարելով այս դահանջները՝ Սիրիան փասորեն վայր կընի արաբական միասնականության դրույթը, ինչը լրջորեն կազդի տարածաշրջանում իր բաղադրական կօրի եւ ազդեցության վրա:

Ամենայն հավամականությամբ Սիրիան, ամբողջովին կամ մասամբ, սիրովածէ լինելու կատարել ԱՄՄ դահանջները: Ամեն դեղում, Սիրիայի ժուրգ իրադարձությունների սրումը նշանավորում է Միջին Արևելքի բաղադրական իրավիճակի նոր փուլ, որն էապես ազդելու է նաեւ մեր տարածաշրջանում գործընթացների զարգացման վրա:

**ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԴԻՄՈՎՐԱԿԱՆ ԴԱՐՅԻ ԾՈՒՐՁ.
ԵՎՐԱՍԻԱՅԻ ԴԱՅԵՑԱԿԱՐԳԸ
ՌՈՒԲԵՆ Սաֆրասյան**

Անցյալ դարի 90-ական թվականների սկզբից «Եվրասիա» հասկացությունը կարեւոր տեղ է գրաղեցնում Թուրքիայում ընթացող բաղաբական բնարկումներում: Այն ընկալվում է որպես հիմնական հայեցակարգ, որն ուղագծում է Թուրքիայի աշխարհաբաշխական ռազմավարությունը, միջազգային հարաբերությունները եւ ազգային անվտանգությունը:

Այդ հայեցակարգի հիմքում գտնվող «Եվրասիա» երմինը մեծաղես բաղաբականացված է եւ գիտական առումով՝ անորոշ: Որու բաղաբագեցներ եւ գիտականներ Եվրասիան հաճարում են գլխավորաղես թյուրքական ժողովուրդներով բնակեցված տարածաշրջան, որի մեջ են մասնաւուրքի անդամներ, Բալկանների ու Կովկասի մի մասը, Միջին Ասիայի նախկին Խորհրդային հանրապետությունները, Ռուսաստանի Վոլգայի շրջանը եւ Հյուսիսային Աֆղանստանը: Նման մոտեցումները, որոնք, ըստ էության, հանդիսանում են դանթյուրիզմի գաղափարախոսության «արդիականացված» խնդրագրություններ, լայն տարածում գտան թուրքական վերնախավի ամենատարբեր շրջանակներում, մանավանդ 1990-ական թվականների սկզբին: Նրանց տուրք և նույնիսկ այնպիսի գգութավոր բաղաբական գործիչ, ինչպիսին երկրի նախկին նախագահ Սոլեյման Շեմիրելը է: 1992թ. սկզբին, Խորհրդային Սիոնական կուսակցության ղեկավար էլ չանցած, նա, այն ժամանակ գրաղեցնելով վարչապետի դաշտում, ազդարարեց «Թյուրքական աշխարհի» ծնունդը, որի սահմանները, ըստ նրա, ձգվում են Արդիաշիկ ծովից մինչեւ Չինաստան:

Սակայն այս էթնիկական-ծագումնաբանական սկզբունքի վրա հիմնված սահմանումը հետագայում, 1990-ական թթ. կեսերից սկսած, կորցրեց իր մենաւորհը եւ ներկայումս ավելի ինչ է տարածված, քան բացառադիր բաղաբական դասկերացումների վրա հիմնված Եվրասիայի

բնորոշման այլ տարբերակները:

Օրինակ, Թուրքիայի ԱԳՆ վեբսայթի վրա ցօանառության մեջ է դրված Եվրասիայի զուտ աշխարհագրական բնորոշումը՝ «Եվրոպայից Միջին Ասիա ձգվող ընդարձակ լանդշաֆտ»։ Երկրի ներկայիս արտգործնախարար Աբդուլահ Գյուլը բնութագրում է Եվրասիան որպես «Եվրոպայից ու Ասիայից բաղկացած միասնական մի մայրցամաք»։ Ըստ էության, այդպիսով փորձ է արվում խուսափել հասկացությունը բաղադրականացնելու մեղադրամներից։ Այնուամենայնիվ, թուրք դիվանագիտների հետ ցուրջ մեկ տասնամյակի ընթացքում մեր բազմաթիվ հանդիպումները թույլ են տալիս եզրակացնել, որ իր առօրյա գործունեության ընթացքում թուրքական դիվանագիտությունը նախընտրում է հենվել ոչ թե դաշտնական սահմանման վրա, այլ օգտագործում է այն խիս բաղադրականացված տարբերակը, որը Եվրասիայի ցօանակները սահմանափակում է Հարավային Կովկասի եւ Միջին Ասիայի ութ նորանկախ դետություններով։ Առաջին հայացքից զուտ վերացական հետաքրքրություն ներկայացնող Եվրասիայի սահմանների բնորոշման խնդիրը խորհում ունի կարեւոր նշանակություն՝ մեր օրերի Թուրքիայի բաղադրականության շարժառիթները բացահայտելու տևակետից։

Եվրասիայի հայեցակարգը, որը կենտրոնականներից է աշխարհագաղաքանության բնագավառում, Թուրքիայում սկսել է ուսումնասիրվել միայն վերջերս՝ տարածացանային աշխարհագաղաքական միջավայրի նշանակալի փոփոխությունների հետեւանոնքով։ Թուրք տեսաբանները, օգտագործելով արեւմտյան դասական աշխարհագաղաքական մուտքումները (Զ. Մակինդերից մինչեւ Զ. Բժեզինսկի), փորձել են ստեղծել իրենց ուրույն կոնցեպցիաները։

Նրանցից ամենաուշագրավը ու ամբողջականն է Ռամազան Օղեյի (Մարմարայի համալսարանի դրոֆեսոր) առաջ բաշած աշխարհագաղաքական հայեցակարգը։ Այն կրում է «Թուրքերի գերիշխանության տեսություն» վերնագիրը։ Օղեյի կոնցեպցիայի հիմնական տարրերը կարելի է ամփոփել հետեւյալ կերպ։ Անառողիան աշխարհի

«միջնաբերդն» է, եւ Անատոլիայում իշխող Երկիրը՝ Թուրքիան, սիրաղետելով այդ միջնաբերդին, հնարավորություն ունի իր հսկողության տակ առնել «Անրին Շքանակի» տարածաշատաները, որնն են, ըստ թուրք գիտնականի, Բալկանները, Սերճավոր Արևելքը եւ Եվրասիան: Ավելին, այդ «Անրին Շքանակի» վրա իշխող դետությունը՝ Թուրքիան, կաղթե ուս կառավարելու է աշխարհը, Եգրակացնում է հեղինակը: Այստիսով Օգեյը օրինականացնում է Եվրասիայում Թուրքիայի գերիշխանությունը՝ համարելով այն այդ Երկրի աշխարհագրության բնական արդյունք: Ավելի հեռու գնալով՝ նա Եվրասիայում Թուրքիայի գերիշխանությունը դիտում է ոչ թե որմես իննանդատակ, այլ ավելի մեծ արդյունքի հասնելու միջոց:

Թուրք աշխարհագրադեմների այլ հրապարակումներն այստան ուղղամիտ չեն եւ այստան հեռուն չեն գնում, սակայն նրանց մեծ նաև նույնութեա դաշտանում է Եվրասիայում Թուրքիայի գերիշխանության կամ գերակայության գաղափարը՝ դիմելով ավելի «նուրբ» ձեւակերպումների: Այստես, օրինակ, Մուսթաֆա Յըլմազը (Յաջեթեփե համալսարանի դրոֆեսոր) նույնութեա բնութագրում է Թուրքիան որմես «բնական միջնաբերդ», որը գտնվում է Բալկանների, Կովկասի եւ Սերճավոր Արևելքի կենտրոնում, ինչը նրան հնարավորություն է տալիս կիրառելու մի շարժ Երկրներանքային տնտեսական, քաղաքական ու ռազմական մոտեցումներ:

Թուրքիայի «բնական» աշխարհագրադական դայմաններից բխող գերակռող դերը ընդգծելու նղատակով 1990-ական թվականներին գիտական եւ բաղադրական Շքանառության մեջ է դրվել նաև մեկ այլ հասկացություն՝ «կենտրոնական Տերություն»: Դամաձայն այդ մոտեցման ջատագովներից մեկի՝ Օրալ Սանդերի, Թուրքիան, իր հզորությամբ զիջելով մի շարժ այլ դետությունների եւ Ենթարկվելով «համամոլորակային զարգացումների» ազդեցությանը, միաժամանակ, ընորհիվ իր «կենտրոնական Տերության» դիրքի, ինքն էլ է Անթագրում այդ զարգացումների վրա:

1990-ականներին Թուրքիայի ձախ մտավորականներն ու բաղադրական գործիչները, ինչպես նաև իսլամամետ մի շարֆ բաղադրական ուժերի ներկայացուցիչներ ձեւակերպեցին Թուրքիայի Եվրասիական բաղադրականության մի այնուհի տարբերակ, որն, ըստ էռության, իրենից ներկայացնում է լիարժեք այլընտրան «ավանդորեն» արեւմտամետ բնութագրվող բենալիսական արտաքին բաղադրական ռազմավարությանը: Այս մոտեցման հիմքում դրված է «արեւմտյան իմաղերիալիզմի» դեմ Եվրասիական գլխավոր քառորդունների՝ Թուրքիայի, Իրանի ու Ռուսաստանի համագործակցության գաղափարը: Այս ենսակետն առաջ բառողները բնադրատում են Թուրքիայի արտաքին բաղադրականությունը Արեւմուտիքի շահերին սորտադաս լինելու եւ Երկրի բուն շահերը անտեսելու համար: Նրանի համեմ են գալիս որոշես Թուրքիայի՝ Արեւմուտիքից անկախ արտաքին բաղադրականության կողմնակիցներ: Նրանց թվում են ինչպես ձախ, այնուև էլ աջակողմյան եւ իսլամամետ մտավորականների ու բաղադրական ուղանակների նօանավոր ներկայացուցիչներ: Մասնավորապես, Վերջերս հայտնի դարձավ, որ Երկրի հեղինակավոր աջակողմյան բաղադրական գործիչներից Հյուսնյու Շողանը նույնիսկ բայեր է ծերնարկում «Եվրասիական կուսակցություն» հիմնադրելու նորագույն: Իսկ Թուրքիայի սոցիալիստական շարժման վետերան Շողու Փերինչերը, որը նույնության դատավանում է վերոհիշյալ ենսակետը, իր գրեթե մեկի համար չափազանց բնորոշ վերնագիր է ընտրել՝ «Եվրասիայի ընտրությունը՝ Թուրքիայի համար անկախ արտաքին բաղադրականություն»:

Ժամանակակից Թուրքիայի բաղադրական եւ մտավորական էլիտան այնուամենայնիվ հիմնականում արեւմտամետ է եւ հավատարիմ է մնում Աքաբյուրի ռազմավարական նախընտրությանը: Նրա այդ թերի ներկայացուցիչները դրագմատիկ են եւ բազատեյակ, որ Թուրքիան սնիսապես եւ բաղադրականապես դեռեւս դատրաս չէ վերածվել Եվրասիայում միակ բաղադրական գերիշխող ուժի: Այդ դատաճառով նրանի Թուրքիայի արտաքին բաղադրականության Եվրասիական ուղղությունը համարում են Թուրքիա-Արեւմուտիքի հարաբերություններին սորտադաս եւ ձգտում են

Եվրասիայում իրենց բաղաբականությունը կոռորդինացնել Արեւմուտքի՝ մասնավորապես ԱՄՆ նղատակների հետ: Միաժամանակ նրան եվրասիական տարածաշրջանում Թուրքիայի ազդեցության տարածումը կարենոր հաղթաթությ են համարում Արեւմուտքի հետ այնորին հարցերի սակարկման գործում, ինչպիսիք են, օրինակ, Եվրոպական Միությանը Թուրքիայի լիիրավ անդամակցությունը կամ Կիորոսի խնդիրը:

Եվրասիայի վերաբերյալ թուրք բարձրաստիճան ազդեցիկ զինվորականների աշխարհաբաղաբական եւ աշխարհառազմավարական տեսակետների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք որոշ ընդհանուրություններ ունեն վերեւում նշված արեւմուտքան ուղղվածության բաղաբական ընտրանու հայացքների հետ: Զինվորականությունը Եվրասիան եւ նախեւառաջ Հարավային Կովկասը դիտում է որպես Թուրքիայի անվտանգության համար վտանգ ներկայացնող անկայուն տարածաշրջան: Վետանգի հիմնական աղբյուր նա համարում է Ռուսաստանի ազդեցությունը եւ ռազմական ներկայությունը այդ տարածաշրջանում: Այսովուգ, ակնհայտ է, որ զինվորականության ուշադրությունը գլխավորապես կենտրոնացած է Հարավային Կովկասի երեք դեսությունների վրա: Միաժամանակ, նրանք, ինչպես նաև թուրքական շատ եւ շատ բաղաբական գործիչներ, գտնում են, որ, ինչպես նշել է հանգստի կոչված գեներալ-լեյտենան Սադի Երգուվենչը, «Թուրքիան գտնվում է աշխարհի կենտրոնում»:

Վերջին երկու-երեք տարիների ընթացքում թուրք բարձրաստիճան զինվորականության ցրանում երեւան է եկել մի խճբավորում, որը ընդդիմանում է ԵՄ հետ ինտեգրմանը: Նրա ներկայացուցիչները Եվրասիան դիտում են ոչ թե անկայունության աղբյուր, այլ որպես Թուրքիայի համար կարենոր աշխարհաբաղաբական առավելություն: Զնայած իրենց արեւմուտքան կողմնորոշմանը, նրանք այդ տարածաշրջանում կանխատեսում են ուժեղ մոցակցություն Եվրոպական տերությունների եւ համարական գերմանիայի հետ:

Նախորդ՝ Բյուլենթ Էջեկիթի ղեկավարած կողալիցիոն կառավարության իշխանության տօքանում ԱԳՆ-ն գտնվում էր ժողովրդավարական-Զախ Կուսակցության (ԺԶԿ) հսկողության տակ, ուստի անհրաժեշտ է հատուկ ուժադրություն դարձնել այդ կուսակցության ղեկավարների հայացքներին: Ընդհանուր առանձ նրանք դաշտավայրում էին Թուրքիայի արտաքին բաղադրականության արեւմտյան ուղղվածության ռազմավարությունը, սակայն հանդես էին գալիս որու վերապահումներով: Օրինակ, 1995թ. ԺԶԿ առաջնորդ Բյուլենթ Էջեկիթը հանդես էր եկել «Տարածքային ուղղվածության արտաքին բաղադրականություն» վարելու առաջարկով: Նա գտնում էր, որ աղագյում, օգտագործելով Եվրոպայի ու Ասիայի swarrterը, հնարավոր կլինի ստեղծել Եվրասիայի գերարածացանի դետություններից բաղկացած ընդհանրություն, իհարկե, Թուրքիայի ղեկավարությանը: Այդ ինտեգրման գործընթացները նկարագրելու նղատակով նա նույնիսկ առաջարկել է օգտագործել հատուկ տերմին՝ «Եվրասիականացում»:

Այդ կառավարության արտգործնախարար Խսնայիլ Ջենը, որը նույնութեան ներկայացնում էր ԺԶԿ-ն, չէր խուսափում հրամարակայնորեն եւ ամենայն հստակությամբ բացահայտել Թուրքիայի հեռուն գնացող Եվրասիական դլանները: Այսպես, օրինակ, ժամանակին նա հայտարարել էր. «Մենք, անտարակույս, կանդամակցենք Եվրոպական Միությանը, սակայն մեր տեսադաշտը ավելի ընդարձակ է: Մեր նղատակն է դառնալ Եվրասիայում որոշումներ կայացնող կենտրոն»:

Էջեկիթի կողալիցիոն կառավարությանը փոխարինած «Արդարության ու զարգացման կուսակցության» կառավարության ծրագրում հատուկ նշվում է, որ Ոտասատանի հետ հարաբերությունների ընդլայնման նղատակի հիմքում գտնվում է «Եվրասիայի հեռանկարը բժախնդրություն ընդլայնելու» ձգտումը: Իսկ նախանձ իշխանության գալը այդ իսլամամետ կուսակցությունը իր ծրագրում հատուկ նշել էր, որ դիմի ձգտի ընդլայնել երկրի արտաքին բաղադրականության «Եվրասիական ուղղությունը»:

Վերեւում բննարկած տեսական մոտեցումներն

ու դատողությունները Եվրասիայի վերաբերյալ, որոնք լայն տարածում են սացել ժամանակակից Թուրքիայի հասարակական-ֆաղաֆական կյանքում, դարզորու վկայում են, որ այդ տարածաշրջանում Թուրքիայի գերիշխանության գաղափարը՝ այս կամ այն հիմնավորմամբ, կիսում են երկրի ինչուս ֆաղաֆական, այնպես էլ ռազմական ու գիտական էլիտաները: Նշենք նաեւ, որ երկրի բնակչության լայն խավերը նորանկախ դեռություններում Թուրքիայի գերիշխանության հաստատմանը ընկալում են, ինչուս գրում են հետազոտողներ Բյուլենթ Գյորգյը եւ Ռիչարդ Լանգհոնը, որդես հնարավորություն «վերագտնելու անցյալի իրենց մեծությունը»:

1990-ական թթ. Թուրքիան փորձեց իրականացնել Եվրասիայում իր գերիշխանության հաստատման երազանքը: Նա չափազանց ակտիվ էր այդ տարածաշրջանում: Սակայն գործադրած մեծագույն ջաները հիմնականում աղարյուն անցան. թուրքական դիվանագիտությանը չհաջողվեց հասնել ցանկալի արդյունքների: Այն փասորեն կրեց ծանր դարտություն Կենտրոնական Ասիայում եւ արձանագրեց միայն սահմանափակ ձեռքբերումներ Կովկասում: 2000-ականների սկզբին շատ թուրք մասնագետների ու ֆաղաֆական գործիչների համար դարձավ, որ Թուրքիան չի հասել տարածաշրջանում դեկավար դեր ստանձնելու իր գլխավոր ստատեգիական նորագույնին: Ինչուս վկայում են «Արդարության ու զարգացման կուսակցության» կառավարության Վերջին բայլերը, Եվրասիական հայեցակարգի ազդեցությունը Թուրքիայի արտաքին ֆաղաֆականության վրա ուժեղանալու միտում է դրսելորսմ: Այդ հայեցակարգի ազդեցության ներք իրականացվող արտաքին ֆաղաֆականության կոնկրետ դրսելորսմների բնությունը դրւու է սույն հոդվածի շրջանակներից:

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԻՍԼԱՍԱԿԱՆ ԱԶԳԻ՝ ՈՒՍՍԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ *Արան Փաշայան*

Միջազգային հարաբերությունների արդի փուլում գնալով ավելի ակնհայտ է դառնում բաղադրական գործընթացների վրա իսլամական գործոնի ազդեցությունը։ Այն իրադարձությունները, որ տեղի են ունենում իսլամի ավանդական տարածման շրջաններում, թույլ են տալիս ենթադրել, որ իսլամադավան երկրներին միավորող կրոնական, դարմադառնական եւ մօւակութային ընդհանրությունները դեռևս խիս էական են։ Զգտելով ուրվագծել իսլամական աշխարհի սահմանները՝ մահմեդական արդի հեղինակները նույն են, որ ամբողջ աշխարհի իսլամադավան բնակչությունը ձեւավորում է իսլամական ազգ՝ ումնա։ Չենց այսպես է ներկայացված իսլամի աշխարհը fawrstəqənներում, որ թողարկում են իսլամական ամենատարեր կազմակերպությունները։

Ումնան բոլոր մահմեդականների եղբայրության եւ միասնության գաղափարն է՝ անկախ ազգային, ռասայական եւ սոցիալական դատկանելությունից։ Ումնա հասկացությունը ձեւավորվեց 7-րդ դարում, Արաբական թերակղզում, Մուհամմադ մարգարեի ֆարողչական գործունեության ընթացքում։ Ումնան մահմեդական հավատացյալների հաճայնն էր, որին հաճախնքում էր հավատքը միակ աստծո նկատմամբ։ Նորադավանների հաճայնքը ղեկավարում էր Մուհամմադ մարգարեն, որ մարմնավորում էր ինչոր հոգեւոր, այսպես էլ բաղադրական իշխանությունը։

Այսպիսով, իսլամի հայտնվելով առաջացավ նոր ինսիհուտ՝ հավատացյալների հաճայնքը, որը արարամահմեդական դետության ձեւավորման մեջ վճռորոշ նշանակություն ունեցավ։

Իսլամի հաղթանակից եւ արաբական նվաճողական արշավանդներից հետո ումնա ասելով հասկանում էին մահմեդականներով բնակեցված տարածք։ Այն արտահայտում

Եր նաեւ խալիքայության գաղափարը: Խսլամում եւ խսլամական ղետության մեջ կրոնականի եւ բաղաբականի անմակտելի միասնությունը խորհրդանշում էր ումնայի գաղափարը:

Ումնա արտահայտությունը հիշատակվում է Ղուրանում: Խսլամական միասնության կողմնակիցները հաճախ են վկայակոչում Ղուրանի հետեւյալ այթը. «Եվ ամուր բռնե՛ք այն դարանից, որն ալլահը (մեկնեց ձեզ -Ա.Փ.) եւ մի՛ բաժանվե՛ իրարից» (3; 102):

Խսլամական աշխարհի հոգեւոր միասնության համար բացասական հետեւանքներ ունեցավ Օսմանյան կայսրության եւ Պարսկաստանի մրցակցությունը խսլամական աշխարհում գերակայության հասնելու համար: XVI դարի վերջին զգալիորեն խորացավ հակասությունը խսլամի սուննի եւ սիա ուղղությունների միջեւ, որը երեւան էր եկել խսլամի սկզբնավորման առաջին դարում:

XIX դարի երկրորդ կեսին խսլամական ումնայի սկզբունքը ծառայեց համախսլամականության (Pan islamism) գաղափարախոսությանը, որը կաղված է Զամալ աղ-Դին ալ-Աֆղանիի անվան հետ: Պանխսլամիզմի տեսաբանն առաջ բաւեց խսլամական աշխարհի կրոնաբաղաբական, տնտեսական եւ մշակութային սերս համագործակցության գաղափարներ՝ խսլամական միասնության գրավականը համարելով ումնայի համերաշխությունը: Ալ-Աֆղանին հակված էր կրոնականին հակադրել ազգայինը: Նրա կարծիքով՝ «մահմեդականները չգիտեն մի այլ խսկական ազգություն, բացի իրենց կրոնից», այդ իսկ դատարով ազգայնականությունը չի կարող առաջնորդել խսլամական ումնային:

XIX դարի վերջին եւ XX դարի սկզբին խսլամական միասնության գաղափարը դարձավ գաղութափակարության մեջ գտնվող Ասիայի եւ Աֆրիկայի մահմեդական ժողովուրդների՝ անկախության համար մղված դայլարի կարեւոր գործոններից մեկը:

Առաջին աշխարհամարտից հետո խսլամադապան երկրներում տեղի ունեցած գործընթացները նախադրյալներ

ստեղծեցին դանիսլամիզմի հակադիր տեսությունների, մասնավորապես՝ ազգայնականության զարգացման համար, որն անկախության համար մղվող ազգային-ազատագրական դայլարի գաղափարական հիմքն էր: 1924թ. Խալիֆայությունը խորհրդանշող Օսմանյան կայսրության փլուզումը, Ծուրբիայում ազգայնական ուժերի հաղթանակը, ինչպես նաև Ազգերի լիգայի մանդատային համակարգի ստեղծումը նոյաստեցին մահմեդական Երկրներում տեղային ազգայնականության ձեւավորմանը: Երկրորդ աշխարհամարտից հետո, համարդես 1950-60-ականներին, երբ իսլամադավան Երկրների մի զգալի մասը ձեռք բերեց անկախություն եւ ինքնիշխանություն, ազգայնականությունը դարձավ բաղաբական մուջ գերիշխող ուղղություններից մեկը: Իսլամադավան ժողովուրդների մոջ ազգայինի գիտակցությունը հանգեցրեց նրանց կողմից «ազգ» (nation) հասկացության ժամանակակից ընկալմանը եւ ումնայի՝ մահմեդական համայնքի ավանդական դասկերացման վերափոխմանը: Ումնայի դասական նշանակության հետընթացը առանձնադես ակնհայտ կերպով դրսեռության արաբական ազգայնականության (Pan Arabism) գաղափարախոսության մոջ, որի հիմքում արաբների դամական, էթնիկական, լեզվական, մշակութային եւ աշխարհաբաղաբական միասնության գաղափարն է:

Միենույն ժամանակ հարկ է նշել, որ իսլամադավան ժողովուրդների ցջանում ազգայնական շարժումների դրսեռությամբ չխարխլեց իսլամի դիրքերը: Իսլամը շարունակում էր կարեւոր դերակատարություն ունենալ մահմեդական ժողովուրդների հոգեւոր եւ մշակութային կյանքում, իսկ հասարակության բարոյական, սոցիալական եւ կենցաղային կողմերը շարունակում էին դայնանավորվել Ղուրանով եւ Շարիաթով:

Զիսամրեց նաեւ ումնայի ինքնության գաղափարը, իսկ իսլամի բաղաբականացման դրսեռություններն ավելի ակնհայտ դարձան: 1960-70-ականներին միջազգային հարաբերություններում իսլամի ներգործությամբ լայն թափ ստացան իսլամական համերաշխությանը

միտքած շարժումները, ընդլայնվեց եւ ամրադնդվեց իսլամական ղետությունների հաճագործակցությունը ոչ միայն երկողմ հարաբերությունների շրջանակում, այլև բազմակողմ, տարածաշրջանային եւ այլ մակարդակներում, ներառյալ ոչ իսլամական ղետություններում իսլամական փորձանախությունները: Միջազգային հարաբերություններում առկա ճգնաժամային իրավիճակը, հակասությունը երկու գլխավոր սոցիալ-ֆաղաքական համակարգերի միջեւ, խթանեցին Արեւելում առանձին միջազգային կազմակերպությունների գործունեությունը, որոնք առաջարտում էին արդեն նշանական դարձած խնդիրների լուծման սեփական մոտեցումները, այդ թվում՝ կրոնական հենիփառ կազմական մասնակիությունների գործունեությունը, որոնք առաջարտում էին արդեն նշանական դարձած խնդիրների լուծման սեփական մոտեցումները, այդ թվում՝ կրոնական աշխարհի գաղափարական եւ բաղաբական դեկապարումը: Այս ամենին նոյաստց նաեւ այն հանգամանքը, որ «Երրորդ աշխարհում» հայտնված մահմեդականներին չէր բավարարում միջազգային հարաբերություններում իրենց գրադեցրած դիրքը: Տնտեսական հետամնացությունը, կախվածությունը նախկին մետրոպոլիաներից, հիասթափությունը արեւմյան արժեների նկամաճը, մահմեդական ժողովուրդների առաջ ծառացած եւ չլուծված իհմնախնդիրները խթանեցին իսլամական բաղաբական արմատական շարժումների սկզբնավորումը, որոնց գաղափարախոսությունը խարսխվեց իսլամական սկզբումների վրա: Առաջնահերթություն ձեռք բերեց աշխարհի գաղափառնան իսլամական իդլուտեսությունը, իսկ իսլամական համագործակցությունը դայմանավորվեց իսլամական համերաշխության եւ եղբայրության գաղափարներով:

Միջազգային իսլամական համերաշխության գաղափարն ամրագրվեց 1969թ. Խսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) ստեղծմաճը, որը փորձեց համակարգել մահմեդական ժողովուրդների եւ մետությունների համընդհանուր հետարքերությունները: Կազմակերպության գաղափարախոսությունը խարսխվեց իսլամական ազգի միասնության ու եղբայրության սկզբումների վրա: Ունմայի գաղափարը կարելի է բնորոշել իրեւ ամենակարեւոր եւ հիմնարար սկզբումքը, որը դաշտոնադես հայտարարվեց 1981թ.

իսլամական ղետությունների Մելլայի գագաթաժողովում, ուր միաձայն ընդունված հռչակագրում տրված է ումնայի սահմանունը. «Բոլոր մահմեդականները, որոնք թեւե տարբերվում են լեզվով, մասկի գույնով, բնակության վայրով, մի ազգ են. նրանց միավորում է նույն հավասֆը, նրանք շարժվում են նույն ուղղությամբ, ունեն նշակութային ընդհանուր ժառանգություն, աշխարհում ունեն նույն առանձնահատությունը»:

Իսլամական ազգ հասկացությունը վերաբերում է առանց բացառության բոլոր մահմեդականներին, իսկ ումնայի առաջնորդացը ղայմանավորված է իսլամով: ԻԿԿ գաղափարական-խաղաքական հայեցակարգում իրենց ուրույն տեղն ունեն իսլամական ումնայի վերջնական նորագույն տեսությունների, կարող է ազդեցիկ դիրքեր նվաճել աշխարհում եւ լավագույն հավասարակշռություն ստեղծել հօգուտ ողջ մարդկության: Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը սահմանել է նաեւ ումնայի ղարտավորությունները, որ վերաբերում են իսլամի երենմնի փառքի եւ խաղաքակրթության վերականգնմանը՝ որպես համաշխարհային խաղաղության գրավական:

1997թ. իսլամական ղետությունների ղեկավարների թերամի գագաթաժողովում ունեցած ելույթում իրանի հոգեւոր առաջնորդ այաթոլլա Խամենեին մասնավորաբես ասաց. «Մենք եղբայրներ ենք՝ ամբողջովին կաղաքած միջյանց հետ Ռուրամի հավաստով եւ մեկ միասնական մարմին ենք՝ Ումնա անունով՝ անկախ ղատճական, աշխարհագրական եւ խաղաքական տարբերություններից»:

Մահմեդական ժամանակակից տեսաբաններից շատերի կարծիքով, չնայած տարբերություններին եւ բազմազանությանը, իսլամական աշխարհը միասնական է եւ ներկայանում է որպես մեկ հզոր ումնա, որին նորացում է իսլամի միավորիչ դերը: Ումնայի համերաշխության դրսեւումներից են իսլամական ամենամյա ուժտագնացությունը Մելլա եւ նրա

ողջ Ծիսակարգը:

Սակայն իրատեսական չի լինի կարծել, որ ումնան միասնական է գործնականում: Այսօր ումնայի առաջ ծառացած են մի շարֆ խնդիրներ, ինչպիսիք են՝ եղբայրասպան դատերազմները, դավանաբանական տարբերությունները, միջիսլամական հակասությունները, սոցիալ-տնտեսական դժվարությունները, արեւմյան ազդեցությունը, իսլամական վերածննդի անհրաժեշտությունը եւ այլն: Իրենց հերթին, մահմեդական դետությունների միջեւ առկա են բաղադրական, տնտեսական, մշակութային, լեզվական, եթնիկ, դավանաբանական եւ աշխարհաբաղադրական մի շարֆ տարբերություններ, որոնք հակասության մեջ են իսլամական ազգի գաղափարի հետ, որին խոչընդոտող գործոններից է նաև ազգայնականությունը: Իսլամական ազգի եւ համախմանականության գաղափարներն անընդունելի են ժամանակակից ազգ-դետության (nation-state) տեսանկյունից, որի շրջանակներում մահմեդականներն իրենց համարում են ոչ թե ումնայի, այլ ազգ-դետության ներկայացուցիչ, ասենք՝ եզիդացի, սուրդանցի, սիրիացի, ալժիրցի, դակիստանցի եւ այլն: Մահմեդական դետությունների մի մասն աշխարհիկ բնույթ ունի եւ տուրք է տալիս աշխարհիկ գաղափարախոսությունների: Այսօր իսլամական աշխարհում հաճախ են բնարկումներ ծավալվում աշխարհիկ եւ իսլամական հասարակության ընտրության հարցի շուրջ:

Եղած հանգանակները թույլ են տալիս եզրակացնել, որ միջազգային արդի հարաբերություններում փորձ է արվում ումնայի եւ իսլամական միասնության սկզբունքներն օգտագործել բաղադրական դիտավիրությունների համար: Այս ռազմավարության նղատակը միջազգային իսլամական բեւերի ստեղծումն է, որը կփոխի ուժերի հաշվեկշիռը հօգուտ մահմեդականների: Միեւնույն ժամանակ չըետք է մոռանալ, որ մահմեդականները դեռևս երկու ինքնության (identity) կրողներ են՝ ազգի (nation) եւ իսլամական ումնայի (al-ummah al-islamiyya):

ԱՄՆ ՈՒ ԵՎՐՈՊԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԿԱՏԱԳԻՐ Ֆրենսիս Ֆուկույամա

Նախորդ Երկու տարիներին մենք ականատեսը եղանք իրահի դատարազմի սանձագերծման եւ այդ Երկրի զավթման հարցերով ԱՄՆ ու Եվրոպայի եւ, մասնավորաբես, ԱՄՆ եւ Ֆրանսիայի միջեւ վիհի խորացման: Այդ ընթացքում Սիացյալ Նահանգների եւ Ֆրանսիայի դիրքորոշումների սկզբունքային տարերությունների վերլուծության բազում փորձեր են արվել: Որու մեկնաբաններ նույնիսկ դմուլ էին, թե իրավյան խնդիրը առանցքային հարցերում ՆԱՏՕ-ի ներում դառակտման դաշտառ է դարձել: Տվյալ խնդրի ժուրջ բանավեճն արդեն Երկար ժամանակ է գնում: Արդյո՞ք դա չսկսվեց դեռ այն ժամանակ, երբ Ֆրանսիան համդես եկավ գլոբալացման՝ որդես աշխարհի ամերիկանացման անցանկալի աստելիքի դեմ:

Իմ կարծիքով, ներկայիս դիվանագիտական ճգնաժամը ԱՄՆ ու Եվրոպայի միջեւ՝ ինքնիշխանության կամ միջազգային կազմակերպությունների դերի հարցերում, զգալիորեն խոր տարածայնությունների նշան է: Սակայն ինձ թվում է, որ դրանք իմբնին այնքան էլ էական չեն մեկ այլ խնդրի համենատ, որին բախսվում են Հին ու Նոր աշխարհամասերը: Այս խնդիրը վերաբերում է ոչ թե տեսական սկզբունքներին, այլ այն ընդիհանուր հետագծին, որին նույնականացնելու համար առաջարկում է աշխարհական առաջնային դիվանագիտությանը:

Սոցիալական փոխակերպման գործընթացները մի երկրում կարող են ավելի արագ զարգանալ, քան մյուսում: Բայց փաստ է, որ բոլոր Երկրներում էլ, վաղ թե ուշ, տեղի են ունենալու փոփոխություններ՝ դայմանավորված ներկա դարաշրջանի տեխնիկական առաջընթացի գերակայությանը: Այստիսով, գլոբալացումը, որում ֆրանսիացիները տեսնում էին Ամերիկայի կողմից իրենց նշակութային արժեքների համակարգ ներխուժելու փորձ, փաստուն, արդիականացման համակողմանի գործընթացի նշան է: Հնարավոր է, որ Ամերիկան մյուս Երկրներից ավելի շուրջ է բախսվել այդ

գործընթացին, բայց, անուուտ, նրանի էլ են ընկնելու դրա ազդեցության տակ: Արդիականացման այս զարգացումներն արագացվեցին «Մեծ ցնցման» արդյունքում, որն արդեն անցած դարի 60-ականներին սասանեց բոլոր զարգացած հնդուստրիալ հասարակությունների հիմքերը:

Այս սոցիալական ցնցումն առաջացավ երկու գլխավոր տեխնոլոգիական փոփոխությունների դաշտառով: Մի կողմից՝ իրականացվեց անցում ինդուստրիալ հասարակությունից դեղի տեղեկատվական աշխարհ, որտեղ մասվոր աշխատանքը փոխարինեց ֆիզիկականին: Մյուս կողմից՝ ի հայտ եկան կենսաբժժեկական դատաստումներ (լատիներեն՝ artefactum), որոնք հնարավոր դարձրին գուգավորման դրույթի բացակայության դեղին կենդանի օրգանիզմների վերարտադրումը:

Այս ցնցումը զարգացած արդյունաբերական երկրներում հանգեցրեց միլիոնավոր կանանց սոցիալական դերի բարձրացմանը եւ փոխեց տղաճարդկանց ու կանանց հարաբերությունների բնույթը, որն էլ հսկայական ազդեցություն թողեց ընտանեկան արժեների, դաստիարակության, հանցագործության եւ, ընդհանուր առմամբ, համատեղ ընտանեկան կյանքի հայեցակարգի վրա: Այդ գործընթացի հետևանքները մենք հիմնա ենք սկսում հասկանալ: Այս ցնցումը սկանդինավյան երկրներում եւ Հյուս. Ամերիկայում շատ ավելի վաղ է տեղի ունեցել, քան Արեւելյան ու Արեւմտյան Եվրոպայում եւ ճամդոնիայում: Բայց որտեղ էլ դա տեղի ունենա, հասարակության համար նրա հետևանքներն ամենուր էլ միեւնույն են լինելու:

Կենսաբանական վերարտադրման բնութագրային փոփոխությունները չեն կարող ազդեցություն չթողնել ընտանեկան արժեների վրա: Զարգացած երկրներում, այդ թվում նաև ճամդոնիայում, ծնելիությունը կտրուկ նվազել է: Ֆրանսիայում գրանցվել է 19-րդ դարից ի վեր ծնելիության ամենամեծ անկումը: Զարգացած դետություններում ժողովրդագրական անկումը հասել է սուպառնալից չափերի, ինչը հանգեցրել է նրան, որ տարեկան այդ երկրների բնակչությունը միջին հաշվով նվազում է՝ 1%-ով: Իսկ ինչ

Վերաբերում է միջին տարիքին, աղա այն չի դադարում աճել, եւ այդ գործընթացը սաստկանում է:

21-րդ դարի կեսերին Եվրոպայի բնակչության միջին տարիքը գրեթե կհասնի 60-ի: Ոչ ոք երբեք չի արդել այնոիսի հասարակությունում, որտեղ բնակչության ճնշող մեծանասնությունը կենսաբանական վերարտադրման համար կամ չափազանց երիտասարդ է, կամ չափազանց ծեր: Արդյունում ճամփոնիան ու Եվրոպան կվերածվեն տարեց բնակչությամբ կրզյակների, որոնք ցածրադաշտական կլինիկ զարգացող երկրներով, ուր բնակչության միջին տարիքը կհամապատասխանի դատմականորեն ձեւավորված նորմային, այսինքն՝ 20 տարեկանին: Այս ժողովրդագրական փոփոխություններն արդեն հանգեցրել են բաղաբական հետեւանմերի, այսինքն՝ անհրաժեշտ են դարձրել ներգաղթողների մեծ հոսք, որոնք աշխարհի ամենաաղքատ մշակութորեն տարածեն տարածացաներից հորդել են դեղի զարգացած երկրներ:

Այսդիսով, հետինդուստրիալ երկրների ընդհանուր հետագիծը զարգանում է բազմամշակութային հասարակության ստեղծման ուղղությամբ: Սակայն զարգացած երկրների՝ սեփական դատմական արժեֆներին հապատարին բնակչությունը դժվարությամբ է ընդունում այդդիսի հասարակության ստեղծման գաղափարը: Այնուամենայնիվ, ԱՄՄ մշակութային բազմազանությունը, ինչը Եվրոպացիների մնադատության առարկան է, շուտով դրսելու է հետինդուստրիալ զարգացման ցան աղբող բոլոր երկրներում: 50 տարի առաջ Սովորակ տան Տերերը բացահայտուեն խոսում էին Ամերիկայի մասին՝ որուստ բիլինեական երկիր: Այսօր նույնիսկ նախազահ Բուլցը, որ հաճախ է արտահայտում իր անձնական հայացքները, չի հանդգնի հրամարակայնորեն այսդիսի ձեւակերպում օգտագործել:

Մոտ տարիներս ԱՄՄ-ին ու Ֆրանսիային սղասպում է ներգաղթողների հոսք, եւ օտար բան կախված կլինիկ ներգաղթածներին սեփական դատմական մշակություն ինտերելու այդ երկրների ունակությունից:

Գլոբալացումը բնական ներփին գործընթաց է, որը շարունակվում է մի ժամի տասնամյակ: Այնողևս որ, 21-րդ դարում հետինդուստրիալ հասարակություններին հարկ է լինելու բախսել ամերիկյան մշակույթի այն տարրերին, որոնք եվրոպացիների համար այսօր մերժելի են:

«Le Figaro»

Հունվարի 1-ին լրանում է Գարեգին Նժդեհի ծննդյան 118-ամյակը

ՑԵՂԱԿՐՈՆՆԵՐՈՒՆ*

Դու գիտես դասական դասմութիւնը, որ խօսելով
Լիկուրգոսի մասին, ասում է -

Բարեկարգելով Սղարտան (ուր բաղաբացիները, մոռացած
իրենց ամձը, կապրէին միայն հայրենիքի համար, ուր նորահաս
սերունդը կը մարզուէր յաղթանակելու արուեստի մէջ, ուր
ամէն ճարդ եւ բոլորը կերգէին՝ փառաբանելով հերոսներին
ու դարսաւելով երկչոսներին)՝ Լիկուրգոսը ժողովի հրակրեց
ժողովուրդը եւ ուզեց, որ նա երդուի, թէ իր բացակայութեան
ժամանակ դիմի չխախտէ իր ստեղծած օրէնքները:

Ժողովուրդը կատարեց մեծ օրէնսդրի եւ հայրենասէրի
ցանկութիւնը - երդուեց, որից յետոյ Լիկուրգոսը թողեց իր
հայրենիքը, հեռացաւ:

Եւ որդեսզի սղարտացիներին չազատէ իրենց երդումից,
նա վճռեց կամաւորապէս մեռնել՝ հեռու Սղարտայէն:

* * *

Ուկտակիցներ,

Ես ցեղի խօսքը, դաշտամունքը, օրէնքը բարողեցի ձեզ: Ու
եր դու երդուեցի՞ մնալ հաւատարիմ ցեղակրօն անուան եւ
դաւանանի՞ն՝ ես հեռացայ:

Այժմ աշխարհագրօէն շա՞ն հեռու եմ ձեզնից, բայց
սղարտացի օրէնսդրի վերջին բայլին դիմելու դատար չունիմ,
որովհետեւ խորապէս հաւատում եմ ձեր ուկտի սրբութեան եւ
անխախտութեան: Չէ՞ որ դու ուկտեցի՞ հաւատարիմ մնալ
ձեր ցեղին: Իսկ ցեղակրօնի համար հաւատարիմ մնալ՝

* Հայրենիքում տղագրվում է առաջին անգամ:

ՆՇԱՆԱԿՈՒՄ է ամէն օր, ժամ, Վայրկեան հղարտանով լսել այն սրբազն ձայնը, որ զբնում է իր արիւնի մէջ եւ ասում՝

«Ես հայ եմ եւ եօթնից հղարտ եմ, որ հայ եմ: Ես իմ ցեղի զաւակն եմ, եւ ահա օսարութեան մէջ իսկ, Ցեղակրօնութեան ժնորհիւ, իր կաթը կը ծծեմ»:

* * *

Ցեղակրօններ,

Ասել՝ «Ես մարդ եմ», առանց ասելու՝ «Ես հայ եմ», ՆՇԱՆԱԿՈՒՄ է մեղանչել եւ հայութեան, եւ մարդկութեան դէմ:

Սո՞ւս է, չկայ եւ դիսի չլինի վերացական, ցեղօրէն անկերպարան մարդը:

Կայ եւ կը մնայ ցեղադէմ մարդը – ֆրանսացին, անգլիացին, ռուսը, լեհը, արաբը, հայը – կայ ցեղորոց մարդը:

Չկայ անկերպարան մարդկութիւն – կան մարդկային ցեղեր: Չկայ մարդկութիւն – կայ նրա զաղափարը, անոնք միայն:

Եթէ գոյութիւն ունենար մարդկութիւնը՝ լոյսի եւ աշխատանի մեր արդար ցեղի կեսն սղաննող թուրքը չէր մնայ անդամիծ:

Եթէ գոյութիւն ունենար մարդկայնութիւնը՝ տնարդ աշխարհը Լոզանում չէր սեղմի թուրք փառաների հայ արիւնով ներկուած ձեռքերը, եւ եղբայրութիւն կեղծող Մոսկուան ժնարքար չէր համբուրուի Քենալական Անգորայի հետ:

Մարդկութիւն, մարդկայնութիւն - դեռ սնամէջ բառեր են, հեգմանք զայլ-ազգերի:

Եթէ այդուս չլինէր՝ հայութեան անհայրենիք մասը Յիսուսի նման չէր շարունակի նախանձել բոյն ունեցող երկնիք թռչուններին:

Այդ այդուս լինելով հանդերձ, դէ՞ս է ծառայել մարդկութեան, այն՝ դէ՞ս է ծառայել, սակայն, մե՛ր ցեղի միջոցաւ, մե՛ր ցեղին ծառայելով - աղրելով ու ստեղծագործելով որդէս հայ մարդ:

Մարդ դառնալու համար, դէ՞ս է ցեղօրէն մարդ մնալ,

ՈՐՎԻԵՏԵԼ՝

Ամէն այլասերուած դիմակազրկուում, այլանդակուում է հոգեղէս, դաշնուում ամստեղծագործ, բանդիչ ուժ, թօնամի՛ մարդկութեան:

Ամէն այլասերուած դժբախտանուում է՝ կորցնելով կեանքն ու աշխարհը թարմ եւ անմիջական կերպով զգալու եւ ընդունելու իր կարողութիւնը:

Ամէն այլասերուած բնազդաբար եւ արդարօւէն արհամարհուում է, անկախ իր լնկերային ռիրֆից:

Այսպէս է դաժում ցեղի արիւնը:

* * *

Ուկտակիցներ,

Եւ ո՞չ մի զիջուում մեր ցեղային անհատականութիւնից եւ արժանադասուութիւնից:

Դա դեռ չգոյ մարդկութեան եւ հայութեան ժահն է դահանջուում:

Բարձրէն, բարձրէն դիտէք – հեռուն՝ մեր ցեղի անցեալն ու աղազան տեսնելու համար, հայոց անցեալի խորհուրդը եւ աղազայի հրայրը աղրելու համար:

Արդէ՛ք ցեղօրէն, ցեղի համար, ցեղակրօնաբար՝ Որդէսզի ձեր միջոցաւ հայ սփիւրի նորահաս սերունդը խորապէս գիտակցի թէ - ամսեթելի վատութիւն է՝ սեփական արժէների ուրացումի գնով օսար ազգերի մէջ կեղծ իրաւահաւասարութիւն փնտուելը:

Հասկանա՞ն - ճշմարիս իրաւահաւասարութիւնը հնարաւոր է միայն եւ միմիայն սեփական արժէների միջոցաւ:

Իսկ արժէներ ստեղծուում է ան, ով ստեղծագործ է:

Իսկ ստեղծագործ է ան, ով չի մեղանչուում իր ցեղային նախաեղութեան՝ իր ցեղի արիւնի դէմ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԶԳԱՅՈՒՄ ԵՎ ԳԻՏԱԿՅՈՒԹՅՈՒՆ.....	1
ՈՒՂԲԵՆ Սաֆրասյան	
ՊԱՐՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ	
ԱՇԽԱՐՉԵՆԿԱԼՈՒՄ	3
ՄՈՒԾԵԴ Լալայան	
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ	9
Գագիկ Տեր-Դարությունյան	
ՆՈՐ «ՍԱՈԾ ՊԱՏԵՐԱԶՄ».....	15
Գագիկ Տերտերյան	
ՎՐԱՍՏԱՆ. ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ ...	20
Դավիթ Դովիհաննիսյան	
ԱՄՆ ՄԻՋԻՆԱՐԵԿԵԼՅԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ	
ՆՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ	24
ՈՒՂԲԵՆ Սաֆրասյան	
ԹՈՒՐՖԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ	
ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՈՐՄԱՆ ԴԱՐՁԻ ԾՈՒՐՁ.	
ԵՎՐԱՍԻԱՅԻ ԴԱՅԱՎԱԿԱՐԳԸ	32
Արամ Փառայան	
ՆԿԱՏԱՈՒՄՆԵՐ ԻՆԼԱՄԱԿԱՆ ԱԶԳԻ	
ՈՒՄՍԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	39
Ֆրենսիս Ֆուկույանա	
ԱՄՆ ՈՒ ԵՎՐՈՊԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ճԱԿԱՏԱԳԻՐ	45
Գարեգին Նժդեհ	
ՏԵՂԱԿՐՈՆՆԵՐՈՒՄ	49

**Շատիկի վրա դատկերված է
Բայազետի բերդը**

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատակություն
Խմբագրական խորհուրդ
Երևան, 375090, Մելիք-Աղամյան 2: Դեռ. 58 04 91, 58 04
83:
Էլ. փոստ hanrapetakan@hhk.am:
Քիմնադիր Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը օֆսեթ, ֆորմատը 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպագույնակը 1000:
Տառատեսակը «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական Օ1Ս 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: